



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2007թ. երկրորդ կիսամյակում /վերլուծություն/

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 88272 գործարքներ, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 32.2%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 37.9%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2007թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 33799 օտարման գործարքների 85.4% կազմել են առուվաճառքները, 13.8%՝ նվիրատվությունները և 0.8%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 35.1%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 33.7% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարաններ:

2007թ. երկրորդ կիսամյակում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 26.1%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 22.0%-ով: 2007թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 9503 առուվաճառքի գործարքների 59.3% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 19.9%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 2.3%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	երկրորդ կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2007թ.
Կենտրոն	392500	463000	433600
Արաբկիր	312000	377300	343400
Քանաքեռ-Զեյթուն	199800	286100	247200
Նոր-Նորք	180500	242900	215700
Ավան	168800	240200	200900
Էրեբունի	170500	243100	211400
Շենգավիթ	192900	256900	226500
Դավթաշեն	200800	267200	233100
Աջափնյակ	181400	251800	217500
Մալաթիա-Սեբաստիա	174800	241300	205400
Նուբարաշեն	113400	131600	120200
<i>Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/</i>	<i>207900</i>	<i>272900</i>	<i>241300</i>

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երկրորդ կիսամյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 13.1%, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 31.3%:

2007թ. երկրորդ կիսամյակում Երևանում իրականացված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն համապատասխանաբար աճի և կայունացման միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 3253 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 12.4%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 6.0%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի

շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		երկրորդ կիսամյակ 2006թ.	երկրորդ կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	73900	110800	96500
	Ապարան	26600	29700	28500
	Թալին	27400	39200	34200
Արարատ	Արտաշատ	58550	89000	76600
	Մասիս	67500	106200	84700
	Վեդի	46200	67000	55600
	Արարատ	46200	57800	54000
Արմավիր	Վաղարշապատ	95500	137300	118000
	Արմավիր	65300	102400	83100
	Մեծամոր	42600	64700	54000
Գեղարքունիք	Սևան	42800	69500	55500
	Գավառ	28300	37800	32900
	Մարտունի	40600	56300	48000
	Վարդենիս	22200	27300	25700
	Ճամբարակ	13600	15300	14300
Լոռի	Վանաձոր	56200	77100	66600
	Ստեփանավան	26900	40700	32700
	Մալտակ	39000	50800	43400
	Ալավերդի	21900	27000	24050
	Տաշիր	20900	27400	23200
	Թումանյան	5400	5500	5400
	Շամլուղ	3000	3100	3000
	Ախթալա	10800	12100	11400
Կոտայք	Աբովյան	110100	151500	134400
	Նոր Հաճն	74540	109200	92600
	Բյուրեղավան	53300	79400	66200
	Եղվարդ	68600	99500	83100
	Հրազդան	40600	55800	46600
	Ծաղկաձոր	77500	105400	86050
	Չարենցավան	47500	68400	55800
Շիրակ	Գյումրի	54400	77900	63700
	Արթիկ	34800	47900	41900
	Մարալիկ	22400	25800	24400
Սյունիք	Գորիս	54600	78700	66400
	Կապան	50500	71500	60300
	Միսիան	43000	56500	49700
	Մեղրի	32800	41100	36000
	Ագարակ	21300	26300	23400
	Քաջարան	28200	36900	30350
	Դաստակերտ	6700	6900	6800
Վայոց Ձոր	Վայք	45200	65600	55200
	Եղեգնաձոր	61700	82900	66900
	Ջերմուկ	74800	113300	98700
Տավուշ	Դիլիջան	52300	73900	61500
	Իջևան	63495	97800	81800
	Բերդ	31000	35200	33000

	Նոյեմբերյան	22700	28700	27100
	Այրում	18000	20900	18000

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գները 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 17.3%, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 40.5%:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակի ամսական փոփոխման շարժերն ունեն կայունացման միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 3795 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևանում՝ 1036, մյուս մարզերում միասին վերցրած՝ 2759: 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 28.0%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 85.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 14.8%-ով: 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 30.6%-ով, ընդ որում Երևանում՝ 54.4%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 23.5%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	<i>երկրորդ կիսամյակ 2006թ</i>	<i>երկրորդ կիսամյակ 2007թ</i>	<i>առաջին կիսամյակ 2007թ</i>
Կենտրոն	397000	474000	441600
Արաբկիր	314500	389300	351000
Քանաքեռ-Զեյթուն	201900	290200	251100
Նորք-Մարաշ	191400	243700	219200
Ավան	170600	244600	204100
Էրեբունի	172500	246800	216400
Շենգավիթ	194400	260500	229100
Դավթաշեն	202600	271500	238500
Աջափնյակ	183600	256200	221300
Մալաթիա-Սեբաստիա	177000	245200	208300
Նուբարաշեն	115400	134000	123100
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	211000	277800	245800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2007թ. երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 13.0%, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 31.7%:

2007թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/ և դրանց փոփոխման միջակայքերը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		Երկրորդ կիսամյակ 2006թ.	Երկրորդ կիսամյակ 2007թ.	առաջին կիսամյակ 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	75600	114900	99300
	Ապարան	28100	33500	31900
	Թալին	28400	42100	36900
Արարատ	Արտաշատ	59900	93600	79100
	Մասիս	68800	108900	88200
	Վեդի	47500	69100	58800
	Արարատ	47400	62600	57300
Արմավիր	Վաղարշապատ	96900	140200	120700
	Արմավիր	66500	104400	86100
Գեղարքունիք	Սևան	44600	71300	58000
	Գավառ	29600	40500	35900
	Մարտունի	41900	58300	51000
	Վարդենիս	23600	30700	29300
	Ճամբարակ	14900	18600	16800
Լոռի	Վանաձոր	57700	82100	70600
	Ստեփանավան	28600	43800	36500
	Սյիտակ	40100	53400	47200
	Ալավերդի	23100	30000	27400
	Տաշիր	22300	29400	25900
	Թումանյան	7100	8700	7800
	Շամլուղ	4400	5800	5100
	Ախթալա	12300	15000	13600
Կոտայք	Աբովյան	111600	157000	138700
	Նոր Հաճն	75700	113600	97400
	Բյուրեղավան	54400	81500	68800
	Եղվարդ	69800	102600	87200
	Հրազդան	41800	59100	50000
	Ծաղկաձոր	80700	158300	105800
	Չարենցավան	48700	70700	58100
Շիրակ	Գյումրի	55700	82900	67500
	Արթիկ	36000	50200	44300
	Մարալիկ	24200	28900	26900
Սյունիք	Գորիս	56000	81800	69000
	Կապան	51800	74800	63200
	Սիսիան	44200	59100	53200
	Մեղրի	33900	43500	38900
	Ագարակ	22500	28000	26100
	Դաստակերտ	8800	9800	9400
Վայոց Ձոր	Վայք	46300	67400	58300
	Եղեգնաձոր	63100	85700	69500
	Ջերմուկ	39100	61200	47600
Տավուշ	Դիլիջան	53400	77600	64700
	Իջևան	64600	100300	84100
	Բերդ	32000	38100	35800

	Նոյեմբերյան	23800	33300	29500
	Այրում	19200	22400	19200

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել են 17.9%, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 45.3%:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետության մարզերում իրականացված անհատական բնակելի տների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժերն ունեն աճի միտում:

Ընդհանուր առմամբ, 2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել են 13528 միավոր /9789.71 հա/ հողեր, որից Երևանում՝ 1134 միավոր /169.95 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 630 միավոր /64.51 հա/ հողեր, որից Երևանում՝ 299 միավոր /29.27 հա/: Օտարված հողերը ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5460 միավոր /8741.98 հա/, որից Երևանում՝ 42 միավոր /8.88 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 5283 միավոր /490.29 հա/, որից Երևանում՝ 779 միավոր /94.41 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 2481 միավոր /228.22 հա/, որից Երևանում՝ 291 միավոր /62.39 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 166 միավոր /226.39 հա/, որից Երևանում՝ 22 միավոր /4.28 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 127 միավոր /100.99 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 10 միավոր /0.84 հա/,
- անտառային հողեր՝ 1 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /1.00 հա/:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 12709 միավորի /9449.04 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 1066 միավոր /161.85 հա/, նվիրատվության գործարքներ՝ 742 միավոր /326.36 հա/, որից Երևանում՝ 37 միավոր /5.10 հա/ և փոխանակության գործարքներ՝ 77 միավոր /14.31 հա/, որից Երևանում՝ 31 միավոր /3.01 հա/:

Հանրապետությունում 2007թ. երկրորդ կիսամյակում, 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 25.1%: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը աճել է 14.8%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 33.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել՝ 29.1%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 3223.19 հա, որից 3146.32 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 38.2%-ը կամ 4860 գործարքներ /5195.57 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 337 միավոր /53.97 հա/, իսկ 61.3%-ը կամ 7788 միավորը /4228.59 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 704 միավոր /107.49 հա/: 2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 61 գործարք /24.88 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	14	3.01	182	15.26	141	35.69	37	6.97	8	1.27	545	75.67	114	23.59
Արագածոտն	285	1467.49	3	1.29	24	3.87	132	9.66	374	475.89	0	0.00	384	36.79	18	1.04
Արարատ	199	400.28	23	8.97	239	20.85	245	7.93	479	238.40	3	11.12	545	47.76	22	2.99
Արմավիր	330	1670.94	19	2.03	52	3.48	160	4.67	808	1475.38	6	0.45	874	64.71	59	1.53
Գեղարքունիք	82	158.34	3	1.25	115	11.52	139	18.20	143	146.26	1	0.004	85	12.02	21	1.78
Լոռի	28	41.58	7	0.78	62	4.65	132	7.08	248	312.52	6	138.08	73	6.82	36	1.77
Կոտայք	518	703.48	22	9.50	128	11.26	484	44.38	941	484.02	7	16.68	1083	99.55	95	12.85
Շիրակ	31	30.03	20	2.99	148	11.86	109	5.76	117	163.35	2	0.03	44	3.61	29	2.83
Սյունիք	28	65.73	6	5.81	11	0.66	149	3.16	123	124.41	3	20.00	31	3.27	26	1.66
Վայոց Ձոր	85	230.91	2	0.65	10	0.99	119	4.99	48	68.56	0	0.00	32	3.32	17	1.90
Տավուշ	35	91.10	7	1.84	128	10.53	140	11.48	149	88.74	2	0.21	86	7.87	15	8.71
Ընդամենը	1621	4859.88	126	38.12	1099	94.93	1950	153.00	3467	3584.50	38	187.84	3782	361.39	452	60.65

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Ուղղակի վաճառք</i>								<i>Աճուրդ վաճառք</i>									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	173	23.84	13	2.88	46	3.70	114	17.26	164	30.12	0	0.00	1	0.13	136	11.56	27	18.43
Արագածոտն	17	0.23	0	0.00	0	0.00	17	0.23	424	1437.08	282	1422.49	3	1.29	24	3.87	115	9.43
Արարատ	60	0.69	1	0.35	4	0.03	55	0.31	645	417.35	198	380.28	22	8.62	235	20.83	190	7.62
Արմավիր	41	0.95	4	0.35	8	0.30	29	0.30	516	1679.38	326	1670.15	15	1.69	44	3.18	131	4.36
Գեղարքունիք	33	5.78	0	0.00	1	0.08	32	5.70	306	183.52	82	158.34	3	1.25	114	11.44	107	12.49
Լոռի	11	0.23	1	0.01	4	0.12	6	0.10	218	53.87	28	41.58	6	0.77	58	4.54	126	6.98

Կոտայք	74	12.51	6	6.77	13	0.94	55	4.80	1075	753.91	515	701.28	16	2.73	115	10.32	429	39.58
Շիրակ	44	2.96	1	0.11	13	0.41	30	2.44	264	47.67	31	30.03	19	2.88	135	11.45	79	3.31
Սյունիք	10	0.84	0	0.00	2	0.21	8	0.63	183	73.47	27	64.67	6	5.81	9	0.46	141	2.53
Վայոց Ձոր	12	2.98	1	0.55	0	0.00	11	2.43	204	234.55	85	230.91	1	0.10	10	0.99	108	2.55
Տավուշ	90	3.26	3	1.78	25	1.24	62	0.24	218	111.44	33	90.86	4	0.06	103	9.29	78	11.23
Ընդամենը	565	54.27	30	12.80	116	7.03	419	34.44	4217	5022.36	1607	4790.59	96	25.33	983	87.93	1531	118.51

Հանրապետությունում 2007թ. երկրորդ կիսամյակում արձանագրվել են նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 14 գործարքներ /69.29 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2007թ. երկրորդ կիսամյակում, 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատությամբ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակական աճը կազմել է 21.4%-ով: Ընդ որում Երևանում աճել է 3.9 անգամ, իսկ մյուս մարզերում միասին վերցրած աճել է 18.2%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը աճել է 8.6%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ՝ 11.5%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 44.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 2.5 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	206	906.32	34.1	4400.0	298.9	267	333.39	362.2	6772.5	2793.1
Ապարան	22	148.81	26.8	1036.3	265.2	36	26.70	90.6	767.6	377.9
Թային	54	367.36	34.2	756.0	99.8	53	88.67	90.6	758.5	403.5
Ծաղկահովիտ						15	24.97	77.0	948.2	176.5
Արարատի մարզ										
Արտաշատ	110	169.93	29.8	2366.7	549.7	212	96.06	335.1	5418.0	1509.5
Մասիս	41	71.01	32.5	6212.5	463.1	104	57.98	181.1	6772.5	1914.8
Վեդի	47	139.34	20.0	1540.0	421.3	154	76.98	203.8	4515.0	1298.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	95	344.22	12.3	2352.0	464.2	228	382.36	294.3	4063.5	961.1
Բաղրամյան	127	1172.34	20.3	802.5	131.5	127	840.44	90.6	677.3	593.9
Վաղարշապատ	104	153.59	19.2	1235.3	330.2	437	244.10	443.7	9030.0	1643.2
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	4	3.92	96.8	236.3	126.4	57	34.34	190.2	496.7	376.9
Ճամբարակ	30	37.94	108.0	1450.0	469.4	26	16.96	45.3	541.8	155.7
Մարտունի	2	0.40	1155.0	2442.0	1798.5	7	1.90	45.3	1806.0	476.4
Սևան	24	84.86	104.3	3515.4	887.2	12	17.27	45.3	451.5	198.8
Վարդենիս	22	31.22	187.0	700.0	417.3	41	75.80	27.2	532.8	256.3
Լոռու մարզ										
Ալավերդի	8	7.59	232.0	3883.3	1382.2	114	35.53	163.0	2483.3	1107.7
Գուգարք	12	29.43	194.3	740.0	509.1	28	20.73	226.4	2709.0	953.3

Սպիտակ	1	0.10	710.0	710.0	710.0	10	2.85	226.4	1490.0	522.9
Ստեփանավան	7	4.46	25.7	1192.1	608.3	51	170.15	90.6	2257.5	373.4
Տաշիր						38	72.22	45.3	451.5	210.2
Կոտայքի մարզ										
Արուսյան	217	296.75	11.8	5700.0	570.2	424	129.63	271.7	11287.5	3523.4
Եղվարդ	189	295.42	35.0	5571.4	445.6	425	279.30	172.1	11287.5	2473.2
Հրազդան	109	109.11	29.0	76923.1	946.7	81	68.17	113.2	2709.0	981.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	5	5.92	14.1	314.6	175.4	47	43.29	249.0	1693.1	459.9
Ամասիա	1	1.49	59.1	59.1	59.1	10	26.13	36.2	237.0	117.8
Անի						45	80.98	108.7	361.2	250.4
Աշոցք						3	3.60	45.3	165.0	117.4
Արթինկ	25	22.62	47.3	1741.2	246.3	11	8.42	63.4	1083.6	176.4
Սյունիքի մարզ										
Գորիս	1	0.50	760.0	760.0	760.0	24	25.01	90.6	673.3	346.0
Կապան	14	42.92	18.4	639.0	143.0	8	9.48	54.3	841.6	230.3
Մեղրի	2	15.40	36.8	900.0	468.4	61	36.59	181.1	1784.2	501.9
Միսիան	10	5.85	260.0	792.0	515.8	30	53.34	45.3	631.2	237.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	49	87.39	34.4	928.0	203.4	40	57.46	117.7	2524.8	1310.1
Վայք	36	143.52	40.9	299.4	141.5	8	11.11	54.3	1430.7	520.9
Տավուշի մարզ										
Բերդ	9	71.73	217.1	750.0	449.7	62	48.97	45.3	841.6	361.0
Իջևան	19	15.84	120.0	5857.7	1140.9	20	8.24	240.0	1683.2	826.9
Նոյեմբերյան	5	3.29	217.7	1298.0	681.5	62	30.93	45.3	3509.5	541.3

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2007թ. երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	12	16870.0	174.5	179.0	177.2	349	314164.7	113.2	3612.0	2339.5
Ապարան	3	2847.0	105.5	249.8	149.9	18	26910.0	113.2	632.1	199.8
Թալին	9	19019.0	49.0	113.7	80.5	12	21990.0	45.3	361.2	97.6
Ծաղկահովիտ						1	1280.0	45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	104	101660.0	113.8	430.0	243.3	130	136823.0	135.8	2709.0	899.6
Մասիս	117	99043.0	121.4	1741.7	612.7	316	236780.0	135.8	9030.0	1164.7
Վեդի	14	7558.5	410.0	1171.3	653.9	93	100653.0	113.2	993.3	651.4
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	4648.0	105.9	2061.8	1509.1	133	126386.0	135.8	2257.5	1116.9
Բաղրամյան						13	14970.0	81.5	270.9	135.2

վաղարշապատ	39	27159.0	249.5	3828.0	2929.1	722	498016.0	135.8	4515.0	1472.8
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	1	1000.0	115.0	115.0	115.0	12	21818.0	135.8	903.0	359.6
Ճամբարակ	2	735.0	106.7	120.0	113.3	6	8841.0	45.3	135.5	98.3
Մարտունի	102	99203.0	61.4	157.3	108.5	36	44120.0	90.6	451.5	243.6
Սևան	9	13500.0	188.1	434.8	237.4	14	16808.0	90.6	903.0	154.5
վարդենիս						17	28633.0	45.3	225.8	112.4
Լոռու մարզ										
Այավերդի						13	14001.0	67.9	270.9	128.9
Գուգարք	41	29322.0	144.0	10900.0	3268.5	37	30292.6	67.9	2347.8	555.3
Սայխտակ	2	2300.0	92.0	94.6	93.3	8	9650.0	63.4	451.5	127.1
Ստեփանավան	15	13765.0	75.6	277.2	186.4	15	14225.0	45.3	270.9	106.3
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	59	57030.0	270.0	2325.0	1156.1	492	422645.7	135.8	6772.5	1806.9
Եղվարդ	29	22124.0	172.0	3234.0	1827.3	478	463850.0	135.8	6772.5	1935.1
Հրազդան	27	24030.0	145.0	9912.5	1342.6	103	98457.5	135.8	9030.0	1260.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	88	96111.9	126.0	11538.5	1999.1	23	13183.8	113.2	1535.1	327.5
Ամասիա						1	1000.0	45.3	135.5	68.5
Անի						6	5489.0	67.9	180.6	98.4
Աշոցք						3	8600.0	40.8	135.5	57.2
Արթիկ	47	18403.0	24.3	900.0	277.3	11	7820.0	67.9	925.6	163.9
Սյունիքի մարզ										
Գորիս	1	600.0	1200.0	1200.0	1200.0	5	4640.0	67.9	541.8	236.0
Կապան	7	3520.0	55.2	5363.6	2822.5	4	4948.0	67.9	632.1	202.5
Մեղրի	1	470.0	325.5	325.5	325.5	14	12470.0	67.9	406.4	118.9
Սիսիան						8	10630.0	67.9	406.4	137.6
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	10	9900.0	113.5	686.3	287.2	26	25124.0	67.9	1128.8	295.4
վայք						5	5900.0	77.0	632.1	120.1
Տավուշի մարզ										
Բերդ						2	96.0	45.3	632.1	85.7
Իջևան	97	89230.0	76.0	2200.0	1257.1	76	71074.0	67.9	1354.5	416.2
Նոյեմբերյան	6	3693.0	69.0	447.1	415.3	6	7530.0	45.3	632.1	131.1

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 9 գործարքներ 4.86 հա մակերեսով, ընդ որում 3-ը՝ Գեղարքունիքի /0.15 հա/, 2-ական՝ Կոտայքի /0.10 հա/, Շիրակի /4.41 հա/ և 1-ական՝ Արարատի /0.10 հա/, Լոռու /0.10 հա/ մարզերում:

2007թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5891 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 6.7%: Ընդ որում, վարձակալության գործարքների 40.2% իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2007թ. երկրորդ կիսամյակում 2007թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 20.9%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 44.5%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 438 բնակարանների, 199 անհատական բնակելի տների, 1954 հասարակական, 241 արտադրական նշանակության օբյեկտների, 3015 միավոր /11325.65 հա/ հողերի, 1 այգետնակների և 43 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկելով են հողերի վարձակալության գործարքներում:

2007թ. երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 260 վարձակալության գործարքների, այդ թվում 94

միավոր /6.33 հա/ կառուցապատման իրավունքով, քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 2.0 անգամ, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 50.3%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 11325.65 հա հողերից 71.29 հա վարձակալվել են Երևանում: Մյուս մարզերում վարձակալված 11254.35 հա հողերի 62.71 հա կազմում են քնակավայրերի, 19.87 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 92.28 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկային օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 3335.16 հա, որից 3229.29 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Վամայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 2732.08 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2007թ. երկրորդ կիսամյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն՝ ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Վամայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>		<i>Վամայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի</i>	
	<i>վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>վարձակալության գործարքների քանակները /միավոր/</i>	<i>վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	5	595.41	58	170.13
Արարատ	6	78.23	63	302.17
Արմավիր	1	10.00	60	304.55
Գեղարքունիք	111	1357.08	340	1175.99
Լոռի	3	27.70	184	690.32
Կոտայք	2	130.00	121	236.93
Շիրակ	0	0.00	694	1551.99
Սյունիք	19	305.37	57	2923.92
Վայոց Ձոր	2	2.45	42	552.06
Տավուշ	2	225.84	37	48.85
Ընդամենը	151	2732.08	1656	7956.91

2007թ. երկրորդ կիսամյակում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14762 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 16.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 41.2%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 93.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /48.1%/, առանձնատների /25.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /9.7%/ և հողերի /12.7%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 5824 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 39.9%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 61.6%-ով:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 3384.97 հա մակերեսով հողեր, որից 33.68 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 94.8% կամ 3210.14 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.79 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 1447.58 հա, որից 1444.66 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2007թ. երկրորդ կիսամյակում գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 44 և 27 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. առաջին

Կիսամյակի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը աճել է 31.5%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 19.3%-ով: 2007թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 19.7%: 2007թ. երկրորդ կիսամյակում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժն ունի աճի միտում:

2007թ. երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 14673 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 33.7%-ով, իսկ 2006թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ 43.3%-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.6%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /37.3%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն